ՀՀ ՊՆ, <<ԶԻՆԱՌ>> ՓԲԸ
ՀՀ, Երևան, Արարատյան 99
011-46-27-27
011-46-28-28

ZINAR

MoD of RA, "ZINAR" CJSC
99 Araratyan, Yerevan, RA
zinar.am@yahoo.com

N 9

«15» 02 2024թ.

«ՍՈՒՐ ԵՎ ՆԻԶԱԿ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Կ.ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սողոմոնյան,

Հայտնում ենք, որ «Զինառ» ՓԲԸ-ի և «ՍՈՒՐ ԵՎ ՆԻԶԱԿ» ՍՊԸ-ի միջև միջև 20.05.2022թ. կնքվել է թիվ ԶԻՆԱՌ-ԳՀԾՁԲ-22/3 ծածկագրով անվտանգության ապահովման ծառայությունների մատուցման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017 թվականի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ **Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:** (...)

Պայմանագրի 7-րդ կետի 7.10 ենթակետի համաձայն՝ պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ **բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:** (...)

Պայմանագրի 7-րդ կետի 7.11 ենթակետի Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: **Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:**

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով 2024 թվականի համար նշված ծառայության ձեռքբերման նպատակով նախատեսված **ֆինանսական հատկացումների չափը,** հայտնում ենք, որ վերը նշված պայմանագիրը լուծվում է 01.03.2024թ.ից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԱՐՇԱԿ ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ**

Կատարող՝ Օֆելյա Կիրակոսյան

Հեռ.՝ 099-222-444